ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1230: **գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ԵՎ ԻՆՁ ՄԻ պահ թվաց՝
Քարերի տակ քնած
Դարերը վեր թռան...

Համո Սահյան

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 10 ՄԱՅԻՍԻ 2018Թ.
№ 12 (470)

Սիրո եւ հանդուրժումի հեղափոխությունը՝ հաղթական հանգրվանում

Նիկոլ Փաշինյանն ընտրվեց ՀՀ վարչապետ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մայիսի 8-ի հատուկ նիստում կայացած անվանական, բաց քվեարկությամբ «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանն ընտրվեց ՀՀ վարչապետ: Փաշինյանի օգտին կողմ քվեարկեց 59, դեմ՝ 42 պատգամավոր:

Փաշինյանն առաջադրվել էր պատգամավորների թվի ավելի քան 1/3-ի՝ 41 պատգամավորի ստորագրությամբ: Նրա առաջադրմանն ու թեկնածությունը սատարելու մասին հայտարարել էին «Ելք» խմբակցությունը՝ 9 պատգամավոր, «Ծառուկյան» խմբակցությունը՝ 31 պատգամավոր եւ ՀՅԴ-ն՝ 6 պատգամավոր:

Խորհրդարանական մեծամասնություն (58 պատգամավոր) ունեցող Հայաստանի Հանրապետական կուսակցությունը վարչապետի ընտրության առաջին փուլից հետո հայտարարել էր, որ վարչապետի ընտրության երկրորդ փուլում կպաշտպանի պատգամավորների մեկ երրորդի (35 պատգամավոր) կողմից առաջադրված թեկնածուին, եւ այդ օրը Հայաստանը կունենա վարչապետ:

Համաձայն ՀՀ սահմանադրության՝ կառավարությունը կազմավորվում է վարչապետ նշանակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Իր նշանակումից հետո վարչապետը հինգօրյա ժամկետում հանրապետության նախագահին առաջարկում է փոխվարչապետների եւ նախարարների թեկնածուներին: Կառավարության կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, վարչապետն Ազգային ժողով է ներկայացնում կառավարության ծրագիրը:

ԱԺ-ն կառավարության ծրագրին հավանություն է տալիս յոթնօրյա ժամկետում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Եթե ԱԺ-ն հավանություն չի տալիս կառավարության ծրագրին եւ չի ընտրում նոր վարչապետ, ապա ԱԺ-ն արձակվում է իրավունքի ուժով: Եթե Ազգային ժողովն ընտրում է վարչապետին, սակայն կրկին հավանություն չի տալիս կառավարության ծրագրին, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Նա Սյունիք էր ուղարկվել ավազակային սպույգ առաքելությամբ

Այս օրերին նորանոր տեղեկություններ են ջրի երես դուրս գալիս՝ Վահե Հակոբյանին 2014-ի օգոստոսին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ուղարկելու, իսկ 2016-ի հոկտեմբերին Սյունիքի մարզպետ նշանակելու շարժառիթների ու հանգամանքների առնչությամբ:

Արդեն կարող ենք արձանագրել՝ Վահե Հակոբյանին պետական մակարդակով ավազակապետի կարգավիճակ էր տրվել եւ Սյունիք գործուղվել ստույգ առաքելությամբ՝ կազմակերպել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության բաժնետոմսերը գործող սեփականատերերից խլելու եւ հայտնի գործչի տրամադրության տակ դնելու գործընթացը:

Եվ այդ խնդիրը լուծելու համար նրան տրվել էր վերպետական ու վերազգային լիազորություններ. շրջանցել ՀՀ սահմանադրությունը, օրենքները, քրեական գործեր սարքել անհնազանդների հանդեպ, հալածել տեղացի մտավորականներին ու շատ թե քիչ երեւելի դեմքերին, աշխատանքից ազատել մարզի լավագույն կադրերին՝ նրանց փոխարինելով նշանավոր դեգեներատներով, ստեղծել «գործ տվողների» ջոկատ, վերջնականապես

էջ 7

Պատվով անցած մարտական ուղի

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրվանից հայ ժողովուրդը ոտքի կանգնեց: Կարելի է փաստել, որ նրա համար եւս դա Հայրենական պատերազմ էր: Վտանգը գիտակցում էին բոլորը: Բանն այն է, որ Թուրքիան Հայաստանի սահմանների մոտ մարտական վիճակում էր պահում 26 դիվիզիա եւ հարմար պահի էր սպասում Հայաստան ներխուժելու, որ ավարտին հասցնի դարասկզբին սկսած իր սեւ գործը:

1990-ականներին Հայրենական մեծ պատերազմի այդ էջը նորովի ընդհանրացնելու փորձեր արվեցին, սակայն հաղթեց բանականությունը, վերստին հաստատվեց այն ճշմարտությունը, որ 1941-1945 թվականների պատերազմը մղվել եւ հաղթանակ ձեռք է բերվել մեր հայրերի ու պապերի արյամբ, որ այդ կռիվը մեր կռիվն է եղել, հայերիս կռիվը: Իսկ մայիսի 9-ը՝ նաեւ մեր հաղթանակի օրն է, հաղթանակով տուն վերադարձածների եւ մարտերում մարտիրոսված հերոսների հիշատակի օրը: Մարտի դաշտից վերադարձածներից մեկը Պետրոս Մարտիրոսյանն է՝ մարտական փառավոր ուղի անցած եւ խաղաղ աշխատանքի անցած անձնավորությունը:

Ծնվել է 1911-ին Կապանի շրջանի Ներքին Մազրա գյուղում: Հայրը՝ Ալեքսան Կոստանդյանը, 1904-1905թթ. ռուս-ճապոնական եւ Առաջին համաշխարհային պատերազմների մասնակից էր, ուներ ցարական բանակի հարյուրապետի կոչում: 1921-ին եղել է Գարեգին Նժդեհի զինակիցը եւ օգնել Սյունիքը Հայաստանի կազմում պահելու սրբազան գործին: 1930-ականների բռնաճնշումներն աննկատ չանցան նրանց ընտանիքի կողքով: Ալեքսան Կոստանդյանը ՀՅԴ անդամ լինելու եւ իբր հակախորհրդային քարոզչություն անելու համար հանիրավի բռնադատվել է եւ գնդակահարվել…

Պետրոս Մարտիրոսյանը 1936-ին տեղափոխվել է Կապան, աշխատել պղնձահանքային կոմբինատի բանվորական մատակարարման բաժնում՝ հաշվապահ: 1941-ի դեկտեմբերի 23-ին մի խումբ զինակոչիկների հետ մեկնել է Երեւան, որտեղ կազմավորվում էր Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան: 1942-ի հունվարից մասնակցել է կրտսեր հրամկազմի դասընթացներին, վեց ամիս հետո նրան շնորհվել է սերժանտի կոչում, ուղարկվել դիվիզիայի 526-րդ գնդի երկրորդ գումարտակի երկրորդ դասակի հրամանատարի օգնական: 1942-ի օգոստոսին դիվիզիան ուղեւորվում է ռազմաճակատ, Գրոզնիում Պետրոս Մարտիրոսյանը հանդիպում է թշնամուն: Թերեքի ափերից սկսվում է նրա մարտական ուղին, որ ձգվում է Գրոզնի, Նովորոսիյսկ, Թաման, Կերչ, Սեւաստոպոլ, Լեհաստան, Վիսլա, Վարշավա, մինչեւ Գերմանիա եւ հաղթանակով ավարտվում Բեռլինում: Դիվիզիան Թամանյան կոչվելու օրը Պետրոս Մարտիրոսյանին խիզախության եւ քաջության համար պարգեւատրում են «Կարմիր աստղի» շքանշանով: Առաջադրանք էր ստացել իր անձնակազմով լռեցնել հակառակորդի կրակակետերը, ինչը խոչընդոտում էր հետեւակի առաջխաղացումը: Նույնպիսի հանձնարարություն ստացավ 1944-ին՝ Կերչի ազատագրման ժամանակ, ինչի համար նրա կուրծքը

էջ 8

Մեր ժամանակների մեծագույն սյունեցիներից մեկին՝ Մաքսիմ Հակոբյանին՝ վերադարձիր, օ՜, վերադարձիր

Մեծարգո Մաքսիմ Անուշավանի

Ձեզ եմ գրում ոչ միայն սրտիս անկեղծ թելադրությամբ, այլեւ բազում սյունեցիների ու հատկապես մեր լրատվամիջոցի ընթերցողների հորդորով:

Ասելիքս հստակ է ու կոնկրետ:

Նախ՝ իմ մեծագույն ափսոսանքն ու ցավն եմ հայտնում այն կապակցությամբ, որ 2008 թվականից մեր բացառիկ ու մաքրամաքուր բարեկամությունը խաթարվեց եւ որոշ դեպքերում թշնամական դրսեւորումներ ունեցավ:

Ընդ որում՝ այդ բարեկամությունն իմ եւ Ձեր միջեւ չէր սոսկ, իմ եւ Ձեր ընտանիքի միջեւ չէր միայն, այլեւ Մաքսիմ Հակոբյան երեւույթի ու «Սյունյաց երկիր» մշակութային երեւույթի միջեւ:

Երկար ժամանակ երկուստեք փորձում էինք ստեղծված տհաճ վիճակի համար մեղմացուցիչ հանգամանքներ ու բացատրություններ գտնել յուրովի, իրար մեղադրել:

Վաղուց, սակայն, այդպես չեմ մտածում եւ քանիցս զրույցներում արտահայտվել եմ այդ մասին:

Այն անախորժությունը, այն թշնամանքը, որ սկիզբ էին առել տասը տարի առաջ, մի մեղավոր ունի: Այդ մեղավորն ինքս եմ: Թեկուզեւ տարիքի տարբերության հրամայականով, թեկուզեւ հայոց անկախ պետության առջեւ Ձեր անուրանալի վաստակը հաշվի առնելով, թեկուզեւ մեր կիսած աղուհացը հաշվի առնելով, թեկուզեւ «Սյունյաց երկրի» հանդեպ Ձեր անեղծ եւ անկրկնելի հոգատարությունը հաշվի առնելով պարտավոր էի առնվազն զուսպ վերաբերվել տեղի ունեցող զարգացումներին:

Ես սովորաբար անվերապահ եմ ընդունում Սուրբ գրքի պատվիրանները եւ չեմ ամաչում կամ երկնչում այսօրվա խոստովանության համար: Ընդհակառակը՝ խիղճս հանգիստ է, եւ ուրախ եմ, որ իմ մեջ ուժ գտա՝ հրապարակավ խոստովանություն անելու եւ սրբագրելու իմ կյանքի ու թերթի տարեգրության այդ էջը:

Ցավոք, նույնը չեմ կարող ասել Վահե Մ. Հակոբյանի հետ ունեցած առնչությունների կապակցությամբ, ում ժամանակին հայտնի պալատականները կարողացան թշնամացնել մեր լրատվամիջոցի հետ, իմ ընտանիքի հետ՝ օգտագործելով մարզպետական լծակն ու Քաջարանի կոմբինատի ֆինանսական ռեսուրսները: Այդ հարցում եւս ակնկալում եմ Ձեր անկողմնակալ ու ազնիվ ըմբռնումը:

Իհարկե, Ձեր գործն է՝ կարող եք եւ նշանակություն չտալ թերթի խմբագրի խոստովանությանը, բայց ես այդպես եմ մտածում եւ Սյունիքի սրբավայրերից մեկում անպայման մտածումներս կհնչեցնեմ ի լուր Բարձրյալի:

Այս խոսքերից հետո, բնականաբար, ինչ-որ կաղկանձներ կլսվեն, բայց դա կարեւոր չէ: Ինձ համար կարեւոր եւ սկզբունքային է ուրիշ բան՝ Ձեզ եմ պարզում իմ եւ «Սյունյաց երկրի» ձեռքը, նաեւ անանձնական խոսքեր հղում մեր լեռնաշխարհի համար դժվարին ժամին:

Անկեղծորեն՝ գիրս գուցեեւ հիմա չծնվեր, եթե չլիներ մի հանգամանք:

Մի քանի օր առաջ մեզ տեղեկություններ փոխանցեցին առ այն, որ Սյունիքի ավազակապետ Վահե Ա. Հակոբյանը սնապարծորեն ու լկտիաբար հայտարարել է, թե խլել է Մաքսիմ Հակոբյանի ունեցվածքի մեծ մասը, մնացյալի զավթումն էլ շարունակվում է:

Ճիշտն ասած՝ մինչ այդ էլ՝ երկու-երեք ամիս շարունակ, նման խոսակցություններ էին շրջանառվում:

Օրեր առաջ syuniacyerkir.am կայքում մի քանի տող գրվեց այդ մասին: Եւ բազմաթիվ հեռախոսազանգեր ստացանք այդ

առիթով՝ մարդիկ ոչ միայն դատապարտում էին ավազակապետի արարքը, այլեւ դա համարում սյունեցիների արժանապատվությունը վիրավորող հանգամանք: Նաեւ պատրաստակամություն էին հայտնում, Հայաստանի գործող օրենքների շրջանակում, Վահե Ա. Հակոբյանի ձեռքից վերցնել թալանածը, եւ ուզում են այդ կապակցությամբ Ձեր դիրքորոշումն իմանալ:

Հիմա՝ անանձնական որոշ հարցերի մասին, ինչպես խոստացել էի:

Մեծարգո Մաքսիմ Անուշավանի

Այդ Դո՞ւք չէիք, որ բոլորիս համերաշխության, սիրո, փոխադարձ հանդուրժողականության հորդոր էիք հղում անընդհատ:

Դո՞ւք չէիք, որ հիշեցնում էիք՝ հայոց անկախ պետությունն անսակարկելի արժեք է, որ դրանից վեհ արժեք չկա բնության մեջ:

Դո՞ւք չէիք, որ ասում էիք՝ Սյունիքը մեր սրբավայրն է, մեր սկիզբն ու ավարտը, մեր վաղվա օրը, հայոց պետականության ու հայոց արժանապատվության ողնաշարը:

Դո՞ւք չէիք, որ մեզ դաս էիք տալիս՝ ավելի լավ է հայրենի երկրամասում մի ծառ տնկել, քան ուրիշ տեղ անտառներ հիմնել:

Դո՞ւք չէիք, որ դողում էիք ամեն մի սյունեցու կյանքի եւ առողջության համար ու մեծագույն պատրաստակամությամբ կանգնում ամեն մի հիվանդի սնարի կողքին:

Դո՞ւք չէիք, որ ամեն մի գյուղի, ամեն մի կոլեկտիվի խնդիրը Ձեր անձնական հոգսն էիք համարում:

Դո՞ւք չէիք, որ սեփական առողջության զոհաբերումով պայքարում էիք Քաջարանի կոմբինատի ներդաշնակ զարգացման համար՝ չենթադրելով նույնիսկ, որ երբեւէ այն կդառնա խոզերի բաժին:

Դո՞ւք չէիք, որ Սյունյաց աշխարհի՝ հազարամյակներով ձեւավորված արժեքները, մեր մշակույթը, մեր դպրոցը, հայոց Մատենադարանը, Աստծո երկրային տաճարները մեր լինելության վեմ քարն էիք համարում:

Եվ այդպես՝ շարունակ…

Ձեր այդ պատկերացումները պահանջված ու արդիական են նաեւ այսօր:

Եվ եկել է ժամը, որ նաեւ Ձեր մասնակցությամբ կյանքի կոչենք այդ պատկերացումները:

Վերադարձեք եւ ոչ թե երբեմն-երբեմն այցելեք Սյունիք, բնակվեք այն տանը, որի պատերի ամեն մի քար համարյա թե Ձեր ձեռքերով եք դրել եւ ուրախացել: Ասում էիք՝ ամեն մի հայ անպայման տուն պիտի կառուցի իր բնօրրանում:

Ձեր վերադարձը, հավատացեք, միայն Ձեզ համար չէ: Ձեզ իրոք մարդիկ սպասում են, թեեւ խոսքն ամենեւին պատմության անիվը շրջելու մասին չէ:

Այս օրերին մեր երկրում տեղի ունեցող իրադարձություններից (իմ պատկերացմամբ) սիրո, բարեկամության, համերաշխության լույս է ճառագում:

Ձեր այդ քայլով Սյունիքում կավելանան սերն ու համերաշխությունը, նաեւ հանդուրժողականությունը, քանի որ մարդիկ Ձեզ ակնածանքով, պատկառանքով ու երախտագիտությամբ են հիշում:

Դա շատ կարեւոր է, քանզի միայն համերաշխությամբ եւ սիրով, իրար նեցուկ կանգնելով, քրիստոնեաբար իրար ներելով կարող ենք Սյունիքն ազատագրել պիղծ գաղութարարներ Վահե Ա. Հակոբյանից, Միեր Պոլոսկովից, Զարուհի Տոնապետյանից եւ մյուսներից:

Հավատացեք, մեծ ավերածություններ են նրանք գործել Սյունիքում, մեծ աշխատանք են տարել՝ ազնիվ եւ պետականավեր սյունեցիների մեջ Հայաստանի Հանրապետության հանդեպ ատելություն սերմանելու, Հայաստանի օրենքները ծաղրելու ուղղությամբ:

Հավատացեք, Սյունիքի ազատագրումը համապետական, համազգային խնդիր է:

Իսկ վերադարձով եւս մեկ անգամ կհավաստեք Ձեր իսկ՝ տարիներ առաջ հռչակած կարգախոսը՝ մեզ համար Հայաստան աշխարհը սկսում է մեր փոքր հայրենիքից, որի անունն է Սյունիք կամ Սիսական:

Մնացյալը, ինչպես ասացի, Ձեր որոշելիքն է:

Մի բան էլ. Դուք միշտ, որքանով հիշում եմ, գնահատել եք իմ ուղղամտությունն ու անկեղծությունը: Հիշելով ու գնահատելով դա, ուզում եմ ոչ միայն Ձեզ, այլեւ Երեւանում, արտերկրում բնակվող նշանավոր սյունեցիներին մի գաղտնիք ասել. գիտե՞ք, թե սովորական մի թշվառական, կիսագրագետ մի չինովնիկ, մի թերխաշ Վահե ինչպես կարողացավ թքնել Սյունիքի ու սյունեցու արժանապատվության վրա:

Դուք՝ բոլորդ, Ձեզ հեռու պահեցիք բնօրրան Սյունիքից, բոլորդ այստեղ կատարվող ամոթալի եւ նվաստացուցիչ իրադարձություններն ուրիշի ցավ համարեցիք եւ ոչ Ձեր անձնական ցավը, բոլորիդ թվաց, թե կարելի է փոքր հայրենիքը նաեւ հեռվից սիրել:

Ավազակախումբը դրան զուգահեռ եւ դրանից օգտվելով կիրառեց օսմանցիներին բնորոշ մի այլ հնարք եւս. մեր երկրամասում, մեր հայրենակիցներից հավաքեցին քաղաքական եւ մարմնական անառակների մի բույլ («լավ տղաներ», համայնքի ղեկավարներ, մարմնավաճառներ)՝ տեղացիների ձեռքով տեղացիներիս ստորացնելու համար:

… Թող Ձեզ հետ միասին Սյունիք վերադառնան եւ երկրամասի համար պատմական այս ժամին սյունեցիների կողքին կանգնեն մեր լեռնաշխարհի մյուս նշանավոր զավակները եւս:

Իսկ անառակների բույլը, որ հավաքագրվել էր (ասպատակներին սպասարկելու համար), պետք է գոնե հրապարակավ ապաշխարություն խնդրի Սյունյաց աշխարհից:

Այո, եկել է անձնական նեղացածությունը, անձնական շարժառիթները մի կողմ դնելու եւ համախմբվելու ժամանակը:

Ուրիշ ճանապարհ չկա…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Թողարկված է՝ 2018-05-04

Հայաստանում Իսպանիայի թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Իգնասիո Իբանես Ռուբիոյին

Ձերդ գերազանցություն

Սյունիքի մարզպետի պաշտոնը զբաղեցնող անձնավորությունը՝ Վահե Հակոբյանը, ըստ պետությանը ներկայացրած հայտարարագրերի, անշարժ գույքի է տիրապետում Իսպանիայում: Ավելի կոնկրետ՝ Վալենսիա ինքնավար համայնքի Ալիկանտե պրովինցիայի էլչե մունիցիպալիտետի Արենալես դել Սոլ բնակավայրում:

Իսպանիայի թագավորության մասին մեր պատկերացումները համահունչ են ժողովրդավարություն հասկացությանը, որտեղ հանդուրժելի չէ կոռուպցիայի որեւէ դրսեւորում:

Եվ, հաշվի առնելով այդ հանգամանքը, հազարավոր սյունեցիների անունից խնդրում ենք պարզել՝ ինչ միջոցների հաշվին է Հայաստանի Հանրապետության պետական այդ պաշտոնյան Միջերկրական ծովին հարող ափում՝ հայտնի տուրիստական վայր Կոստա Բլանկայում ձեռք բերել այդ գույքը:

Անշուշտ, դա մեզ չէր հետաքրքրի, եթե գույքը ձեռք բերված չլիներ Վահե Հակոբյանի՝ Սյունիք գալուց հետո, որտեղ բնակչության 30 տոկոսը (պաշտոնական տեղեկություններով) աղքատ է, որտեղ բնակչության կենսամակարդակն ամենացածրն է Հայաստանում (Շիրակի մարզից հետո):

Ձեր օգնությամբ ուզում ենք փարատել Վահե Հակոբյանին պատկանող այդ գույքի օրինավորության առնչությամբ ծագած կասկածը, որը վերջին մեկ տարում բուռն քննարկման առարկա է նաեւ հայաստանյան մամուլում:

Հարգանքով՝

Սամվել Ալեքսանյան
«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր
4 մայիսի 2018թ.

2 մայիսի 2018թ., երեքշաբթի օրը տեղի ունեցած ցույցերը (լուսանկարներ)

Սիսիան

Գորիս

Կապան

Մեղրի

Ոտքի էր ելել Սիսիանը...

2 մայիսի 2018թ., հարյուրավոր սիսիանցիներ այսօր առավոտվանից հավաքվել են Շաքեի խաչմերուկում եւ փակել Մեղրի-Երեւան ավտոմայրուղին: Նրանք ՀՀ ԱԺ պատգամավոր Ավետ Սարգսյանից պահանջում են վայր դնել պատգամավորի մանդատը, Երեւանից վերադառնալ Սիսիան եւ միանալ ցուցարարներին:

***

Վերջին օրերին բացառիկ լռությամբ եւ հանդարտությամբ աչքի ընկած Սիսիանն արթնանում է:

Ըստ մեր աղբյուրների՝ հարյուրավոր սիսիանցիներ պատրաստվում են մեկնելու մայրաքաղաք՝ միանալու ցուցարարներին:

Սիսիանցիներն արդեն որոշել են իրենց կարգախոսները՝ «Ոչ Վահե Հակոբյանի քոռ գործիք Արթուր Սարգսյանին», «Ոչ Վահե Հակոբյանին»:

Մեկ ուրիշ կարգախոսով էլ սիսիանցիները մարդ են փնտրում՝ «Ո՞ւր է պատգամավոր Ավետը, մեկ տարի շարունակ փնտրում, բայց չենք գտնում»:

***

Սյունիքի փրկարար ծառայությունից տեղեկացնում են, որ մարզի ակտիվ բնակչության հետ մեկ տարի շարունակ՝ 2017թ. ապրիլի 2-ից սկսած որոնողական աշխատանքները պսակվել են հաջողությամբ. գտնվել է Սյունիքից հանրապետական պատգամավոր Ավետ Սարգսյանը:

Փրկարարները, սակայն, ոչ լավատեսական տպավորություններ են ստացել հայտնաբերված պատգամավորի վիճակից. Ավետ Սարգսյանը չի խոսում, չի լսում, հեռախոսազանգերին չի պատասխանում, իրեն հղած դիմումները չի ընթերցում, միայն ակնապիշ նայում է դիմացինին…

Հավաստում են նաեւ, որ անցած մեկ տարում, իբրեւ պատգամավոր, ոչինչ չի արել՝ ստեղծված վիճակի պարտադրանքով:

Շնորհավորենք միմյանց՝ մեր սիրելի, մեր ձեռքով ընտրված պատգամավորին հայտնաբերելու բաղձալի իրադարձության կապակցությամբ:

Սակայն համաձայն չենք տեսակետին, թե պատգամավորն անցած մեկ տարում ոչինչ չի արել: Դա ամբողջապես զրպարտություն է: Անցած մեկ տարում, օգտվելով իր մանդատից, սեփական շինարարական կազմակերպության համար պետական պատվերով մի քանի ծրագիր է նա շահել ազնիվ մրցույթի շնորհիվ: Այնպես որ՝ թող ոչ ոք չհամարձակվի մեր սիրելի պատգամավորին մեղադրել անբանության մեջ:

***

2 մայիսի 2018թ., վերջին օրերի համար աննախադեպ հանրահավաք էր Սիսիանում՝ Համո Սահյանի հուշարձան-կոթողի դիմաց: Ելույթ ունեցողները նշում էին տեղական ու տարածքային իշխանությունների կողմից համայնքում թույլ տրվող կամայականությունների, նրանց կողմից ստեղծված վախի մթնոլորտի մասին: Նշվեց նաեւ, որ համայնքապետարանի աշխատակիցները վերջին օրերին ամենատարբեր սպառնալիքներով մարդկանց

հետ են պահել ցույցերից եւ հավաքներից:

Հանրահավաքից հետո ցուցարարները քայլել են քաղաքի փողոցներով:

Նույն ժամին ցուցարարները փակել էին Աղջկա արձանի մերձակայքը եւ Որոտան գետի երկու ափերը միացնող կամուրջը:

Ցուցարարներին միացել էին քաղաքի դպրոցականները եւ ուսանողները:

Հնչում էին նույն կոչերը, ինչ-որ լսում ենք մայրաքաղաք Երեւանում:

***

2 մայիսի 2018թ., դեռեւս առավոտյան Սիսիանի համայնքապետ Արթուր Սարգսյանը ՀՀԿ անդամ էր…

Քիչ առաջ, սակայն, Սիսիանից մեզ տեղեկացրին, թե համայնքապետը հայտարարել է, որ ինքը երբեք էլ չի եղել ՀՀԿ շարքերում, որ ինքը միշտ էլ դատապարտել է ՀՀԿ քաղաքականությունը Սյունիքում եւ մասնավորապես Սիսիանում:

Արդյո՞ք այս տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը: Չի՞ ուզում Արթուրը հերքել կամ հաստատել Սիսիանում տարածված այդ խոսակցությունը:

***

Ինչպես հաղորդել ենք ավելի վաղ, կառավարության՝ ՀՀ պաշտպանության նախարարի ներկայացրած որոշման նախագծով, կլուծարվի «Սիսիանի հիվանդանոց» ՓԲ ընկերությունը, իսկ տարածաշրջանի բնակչության բուժօգնությունն ու սպասարկումը կիրականացնի «Զանգեզուրի կայազորային հոսպիտալ» պետական հիմնարկը:

Երկու բուժհաստատության միավորման շարժառիթը, ըստ պաշտոնական վարկածի, այն էր, որ հիվանդանոցն ու հոսպիտալն առօրյա գործունեության ընթացքում հաճախ կրկնում են շրջանի բնակչության ստացիոնար բուժօգնության գործառույթները՝ երբեմն նաեւ խանգարելով մեկմեկու:

Մայիսի 2-ին՝ համաժողովրդական աննախադեպ զարթոնք ապրող Սիսիանում, ցուցարարները միացել են քաղաքի հիվանդանոցի՝ գործադուլ հայտարարած բուժաշխատողներին եւ շրջափակել հիվանդանոցը:

Նույն այդ ժամանակ հիվանդանոցում զինվորականները գույքագրում էին իրականացնում՝ երկու բուժհաստատության միավորումն իրագործելու նպատակով:

Ցուցարարները կասեցրել են բուժհաստատության գույքագրումը: Արձանագրել են նաեւ, որ Սիսիանի ավանդական հիվանդանոցի լուծարումը Սյունիքի մարզպետի, Սիսիանի համայնքապետի անճարակության եւ

անսկզբունքայնության արդյունք են:

Վերջին մեկուկես տարում այնտեղ իրականացված կադրային ամոթալի քաղաքականությունն էր պատճառը, որ այդ աստիճան հեղինակազրկվեց Սիսիանի հիվանդանոցը:

Ցուցարարները հույս են հայտնել, որ նորացված Հայաստանի նոր կառավարությունը կվերանայի վերացման հանգրվան հասած հիվանդանոցի լուծարման մտադրությունը:

***

Հանրապետական պատգամավոր Ավետը, ով ԱԺ-ում ներկայացնում է Սյունիքը, երեկ չէր մասնակցում Հանրապետականների եւ Նիկոլ Փաշինյանի հանդիպմանը. ինչո՞ւ:

Ապրիլի 30-ի քաղաքական ամենաուշագրավ իրադարձությունը, անշուշտ, ՀՀ վարչապետի միակ թեկնածու Նիկոլ Փաշինյանի եւ ՀՀԿ խորհրդարանական խմբակցության անդամների հանդիպումն էր, որ տեղի ունեցավ Ազգային ժողովում:

Մայիսի 1-ի ընտրության համար վճռորոշ նշանակություն ունեցող այդ հանդիպմանը դեռեւս անհասկանալի պատճառներով չէր մասնակցում Սյունիքից Հանրապետական պատգամավոր Ավետ Սարգսյանը:

Ընտրողներին հետաքրքրում է՝ ինչո՞ւ մեր պատգամավորը ներկա չի գտնվել վճռորոշ այդ հանդիպմանը:

Եվ քանի դեռ Ավետը չի հիմնավորել իր բացակայության պատճառները, ստիպված ենք ենթադրություններ անել՝ ա) մեր պատգամավորը չի հասկանում, թե ինչ է տեղի ունենում Հայաստանում, բ) ինքն ի վիճակի չէ հրապարակավ կանգնել իրեն ծնած ՀՀԿ-ի կողքին, գ) ինքը պատրաստ չէ ընդունելու համաժողովրդական շարժման գաղափարները, դ) ինքն այս անգամ եւս թաքնված է մնում ու ջրի հատակից դուրս կգա այն ժամանակ, երբ վտանգը կվերանա, երբ վերջնականապես պարզ կդառնա, թե ով է հաղթողը, ում մոտ էլ կկանգնի՝ նախնիներից եկող «սրբազան» ավանդույթի համաձայն:

Բաց նամակ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին

Մեծարգո պարոն նախագահ

Կառավարության 2018թ. ապրիլի 12 N 464-Ա «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն լուծարելու մասին որոշումը քաղաք Սիսիանի եւ 36 գյուղերի 26000 բնակչություն ունեցող համայնքին զրկում է քաղաքացիական առողջապահություն իրականացնող միակ բժշկական կենտրոնից:

Օպտիմալացման քողի տակ լուծարվում է մի բուժհաստատություն, որ Արցախյան պատերազմի տարիներին լինելով տարածաշրջանում միակ բուժհիմնարկը՝ բուժել է ավելի քան 360 վիրավոր եւ հիվանդ ազատամարտիկների՝ չունենալով ոչ մի մահվան ելք, մարտի դաշտում իրականացրել է զինվորների բուժօգնություն:

Նախկին իշխող կառավարության քաղաքականության հետեւանքով «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն վերջին 20 տարիներին անտեսվել է, համաշխարհային բանկի ծրագրով չի վերազինվել եւ չի վերանորոգվել այնպես, ինչպես մարզային մյուս բժշկական կենտրոնները:

2017թ. որակի ցուցանիշների ամփոփումով «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն մարզում առաջատարն է:

Կառավարության որոշման մեջ մատնանշվում են մատուցվող ծառայություններ, որոնք ե՛ւ Սիսիանի բժշկական կենտրոնում, ե՛ւ Զանգեզուրի կայազորային հոսպիտալում կրկնվում են, սակայն դրանք կազմում են ընդհանուր ծառայությունների 10%-ը:

Առողջության առաջնային պահպանման ծառայությունը, շտապ օգնությունը, ծննդօգնությունը, երեխաների հիվանդանոցային սպասարկումը, մասնագիտացված բժշկական ծառայությունն իրականացվում են միայն Սիսիանի բժշկական կենտրոնում: Նշված ծառայությունների գծով Զանգեզուրի կայազորային հոսպիտալը չունի համապատասխան ռեսուրսներ եւ բժշկական կադրեր:

Սիսիանի ժողովրդին բժշկական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքը սահմանափակվում է՝ պարտադրելով նրան անցնելու եւս 10 կիլոմետր՝ Աղիտու գյուղում գտնվող Զանգեզուրի կայազորային հոսպիտալում բուժօգնություն ստանալու համար:

Աղիտու գյուղում գտնվող Զանգեզուրի կայազորային հոսպիտալն աշխարհագրական, տնտեսական տեսակետից մատչելի չէ սիսիանցու համար:

Զանգեզուրի կայազորային հոսպիտալը չունի համապատասխան մասնագիտացում եւ վերապատրաստավորում անցած բժշկական անձնակազմ՝ Սիսիանի բժշկական կենտրոնի ֆունկցիաներն իրականացնելու համար:

Հարակից բնակավայրերն Աղիտու գյուղին կապող հասարակական տրանսպորտ չկա:

ԱՆ-ում բուժմիավորման գործառույթներն ավելի թափանցիկ են, քան պաշտպանության նախարարությունում:

Երբ մայրաքաղաքում գործում են բազմաթիվ բժշկական կազմակերպություններ եւ նրանց հարեւանությամբ գործող զինվորական հոսպիտալներ, չի քննարկվում նրանց օպտիմալացման հարցը, իսկ Սիսիանի տարածաշրջանի խեղճ ժողովրդին զրկում են միակ բժշկական կենտրոնում բուժօգնություն ստանալու իրավունքից:

Հարգելով Սիսիանցու առողջ լինելու սահմանադրական իրավունքը, պահանջում ենք վերանայել կառավարության 2018թ ապրիլի 12 N 464-Ա «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն լուծարելու մասին որոշումը, որն ընդունվել է՝ անտեսելով ժողովրդի կամքը, Սիսիանի բժշկական կենտրոնի 158 աշխատակիցների, Սիսիանի ավագանու կարծիքը:

Եռօրյա ժամկետում դրական պատասխան չստանալու դեպքում կոչ ենք անելու ժողովրդին՝ տեր կանգնել իրենց իրավունքին:

Հարգանքներով՝
«Սիսիանի բժշկական կենտրոն»
ՓԲԸ-ի աշխատանքային կոլեկտիվ
3 մայիսի 2018թ.

Մի խումբ ցուցարարներ Կապանում փակել էին մարզպետի ճանապարհը, նրան իջեցրել մեքենայից՝ սպիպելով լսել իրենց կոչերը

Ապրիլի 25-ին՝ օրվա վերջում, իր գիշերակացի վայր՝ Քաջարանի կոմբինատի պրոֆիլակտորիա վերադարձող Վահե Հակոբյանի եւ նրա թիկնազորի ճանապարհը փակել են մի խումբ ցուցարարներ:

Դա տեղի է ունեցել Կապան քաղաքի արեւմտյան վերջնամասում՝ «Գես» անվանյալ թաղամասի վերջի կանգառի մոտակայքում:

Ցուցարարները ստիպել են նրան իջնել մեքենայից եւ լսել իրենց՝ վերջին օրերին հնչեցվող կոչերը:

Թիկնապահները չեն համարձակվել միջամտել այդ «արարողությանը», իսկ ինքը՝ սարսափահար եւ անզոր ստիպված է եղել մեկ անգամ եւս լսել կապանցիների կոչերը՝ «Մարզ-պետ, հեռացիր», «Մարզ-պետ, ...տիր»...

Այնուհետեւ, խուսափելով իրավիճակի սրացումից, ցուցարարները թույլ են տվել, որ նա շարունակի ճանապարհը դեպի պրոֆիլակտորիա:

Հիշեցնենք միայն, որ Վահե Հակոբյանը, Մհեր Պոլոսկովը, Զարուհի Տոնապետյանը, Միլենա անուն նաժիշտը ու Երեւանից Սյունիք ներխուժած մյուս գաղութարարները 2014թ. օգոստոսից բնակվում են Քաջարանի կոմբինատի պրոֆիլակտորիայում:

Հիշեցնենք նաեւ, որ պրոֆիլակտորիան նրանց գալուց հետո եւ մինչեւ այսօր չի ծառայում իր նպատակին:

Պրոֆիլակտորիան ի սկզբանե երկու նպատակ է ունեցել՝ այնտեղ կազմակերպել հանքագործների հանգիստը, իսկ ամռանը՝ դպրոցականների ժամանցը:

Վահե Հակոբյանը, գալով Սյունիք, հանքագործներին եւ մարզի դպրոցականներին զրկեց այդ վայրում հանգստանալու հնարավորությունից՝ տարածքը դարձնելով միայն գաղութարարների գիշերակացի վայր, պալատական նաժիշտների գիշերային խրախճանքների տեղանք:

Ցուցարարների խումբը, որ մարզպետին իջեցրել է մեքենայից, կոչ է արել նրան՝ Մհեր Պոլոսկովի, Զարուհի Տոնապետյանի եւ մյուս ցեցերի հետ լքել պրոֆիլակտորիայի տարածքը՝ այն վերադարձնելով Քաջարանի լեռնագործներին ու մարզի երեխաներին:

Սեփ.լրատվ.

Վահեն պետք է կանգնի հայոց արդար դատաստանի առջեւ...

Ապրիլի 25-ին մարզկենտրոնում քաղաքացիական անհնազանդությունը սկսվեց Կապանի ինստիտուտի ուսանողների դասադուլով, որը, չնայած ինստիտուտի լժե տնօրեն Արթուր Կոնստանդյանի հոխորտանքներին ու ահաբեկումներին, հաջողությամբ պակվեց:

Այնուհետեւ երթի դուրս եկած ուսանողներին միացան տարածաշրջանային քոլեջի սովորողները, ապա՝ քաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտները:

Երթին եւ ցույցին զուգահեռ Կապանում տեղի ունեցավ ավտոմեքենաների երթ:

Ժամը 13-ի սահմաններում ցուցարարները շրջափակել էին Սյունիքի մարզպետարանի մուտքը, որտեղ էլ տեղի ունեցավ հանրահավաք:

Կրկնելով մայրաքաղաքում հնչող կոչերը՝ կապանցի ցուցարարները նորից կարեւորեցին Սյունիքի մարզպետի հրաժարականը: Նաեւ պահանջեցին, որ Վահե Հակոբյանին կանգնեցնեն հայոց արդար դատաստանի առջեւ՝ պահանջելով միաժամանակ հայոց պետական գանձարան վերադարձնել Սյունիքից գողացած միջոցները:

Ցուցարարները պահանջեցին Հայաստանի Հանրապետությունում Իսպանիայի արտակարգ եւ լիազոր դեսպանին՝ իրենց կառավարության միջոցով կոնֆիսկացնել Վահե Հակոբյանի՝ այդ երկրի տարածքում գտնվող անշարժ գույքը, որը նույնպես ձեռք է բերվել սյունեցիներից գողացած միջոցներով:

Ելույթ ունեցողները մեկ անգամ եւս ներկայացրին մարզպետի կողմից Սյունիք ներմուծված արգահատելի բարքերը եւ վերստին կարեւորեցին նրան պատասխանատվության ենթարկելու հրամայականը:

Այնուհետեւ ցուցարարները շարժվել են դեպի Կապանի քաղաքապետարանի մերձակա պուրակ, որտեղ էլ օրվա վերջին տեղի է ունեցել համաքաղաքային հանրահավաք:

Սեփ.լրատվ.

Դավիթ Հակոբյան. «Մարզպետի թիկնապահը, մարզպետի ու Կապանի համայնքապետի ներկայությամբ, ապտակել է մի երեխայի»

Ապրիլի 22-ին Կապանում շարունակվել է նախօրեին սկիզբ առած ցույցը, որին մասնակցել է մոտ 400 ցուցարար, հիմնականում՝ պատանիներ եւ աղջիկներ: Ցուցարարները վանկարկումներով եւ իրենց միանալու կոչերով քայլել են Շահումյան ու Սպանդարյան փողոցներով: Դրանից հետո հավաքվել են քաղաքապետարանի պուրակում: Այնուհետեւ շարժվել են դեպի Սյունիքի մարզպետարան: Թումանյան փողոցում ցուցարարներին հանդիպել է Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը՝ թիկնապահների եւ Կապանի համայնքապետ Աշոտ Հայրապետյանի ուղեկցությամբ: Նա հորդորել է ցուցարարներին՝ հետ կանգնել ցույց անելուց, վկայակոչելով այն, որ երկիրը պատերազմի մեջ է, սյունեցին նման բաներին չպիտի խառնվի: Մարզպետը պատրաստակամություն է հայտնել իր աշխատասենյակում ընդունել ցուցարարների խմբին եւ քննարկել նրանց հուզող հարցերը, բայց ցուցարարները մերժել են նրա: Ինչ-որ պահի մթնոլորտը լարվել է, մարզպետի եւ ցույցին մասնակցող երեխաներից մեկի միջեւ խոսքակռիվ է բռնկվել ու մարզպետի թիկնապահն ապտակել է երեխային: Դրանից հետո մարզպետը՝ թիկնազորի ու Կապանի համայնքապետի հսկողությամբ եւ ուղեկցությամբ, ցուցարարների սուլոցների ներքո, հեռացել է հանդիպման վայրից ու վերադարձել մարզպետարան:

Այդ մասին «Սյունյաց երկրին» տեղեկացրեց «Երկիր Ծիրանի» կուսակցության հարավային տարածքային կառույցի ներկայացուցիչ Դավիթ Հակոբյանը:

Նախօրեին Կապանում էր «Երկիր Ծիրանի» կուսակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը, նրա գլխավորությամբ քայլերթ էր եղել Քաջարանյան մայրուղով, ցուցարարները փորձել էին փակել Մեղրի-Երեւան միջպետական մայրուղին, բայց ոստիկանները կանխել են նրանց մտադրությունը:

Այնուհետեւ ցուցարարները հավաքվել են մարզպետարանի առջեւ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Լեռնիկ Պետրոսյանը նոկաուտի ենթարկեց Սյունիքի մարզպետին

Ապրիլի 26-ին՝ ժամը 12-ի սահմաններում, Կապանի ինստիտուտ է այցելել Վահե Հակոբյանը եւ հանդիպել ուսանողների, ինչպես եւ դասախոսական ու վարչական կազմի ներկայացուցիչների հետ. մասնակցում էին մոտ 90 հոգի:

Հանդիպման նպատակն էր ուսանողներին եւ դասախոսներին մեկնաբանել Հայաստանում ծավալված քաղաքացիական շարժման անիմաստությունը, որը, ըստ մարզպետի, հոգեկան հիվանդների շարժում է: Եվ որպես օրինակ նշեց Զարուհի Փոստանջյանի անունը, ում օրեր առաջ Երեւանում ցուցարարները միկրոֆոն չտրամադրեցին նույնիսկ:

Նա նորից թվեր հրապարակեց՝ մեր թվացյալ տնտեսական աճի մասին եւ փորձեց համոզել, որ երկիրը վերելք է ապրել, իսկ Սյունիքը զարգանում է աննախադեպ տեմպերով՝ ունենալով ամենաբարձր ցուցանիշները Հայաստանի Հանրապետությունում:

Ուսանողների կողմից բազմաթիվ հարցեր հնչեցին, որոնց նա պատասխանեց իր պատկերացումների եւ գիտելիքների չափով:

Ամեն ինչ ընթանում էր խաղաղ: Սակայն հարցուպատասխանից հետո դահլիճ մտավ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեռնիկ Պետրոսյանը, ով մոտ հինգ տարի ղեկավարել է ուսումնական այդ հաստատությունը, ով կրթական գործի համբավավոր կազմակերպիչ է ոչ միայն Սյունիքում:

Լեռնիկ Պետրոսյանը տեղից ելույթ ունեցավ՝ մասնավորապես նշելով. **«Պարոն մարզպետ, ինչո՞ւ եք մարդկանց խաբում եւ թյուրիմացության մեջ գցում: Մենք ունենք 7 մլրդ արտաքին պարտք, վերջին տասը տարում 300 հազարից ավելի մարդ է արտագաղթել երկրից:**

Ինչ վերաբերում է ձեր սյունիքյան գործունեությանը, վաղուց ժողովուրդը չի հավատում ձեզ, եւ դուք հավատ չեք ներշնչում որեւէ մեկին:

Դուք եկել եք Սյունիքը թալանելու, մեր դարավոր արժեքները փչացնելու, Քաջարանի կոմբինատի միջոցները մսխելու: Քաջարանում ստեղծել եք ստրկատիրական կարգեր՝ երբեմնի փառապանծ ու հպարտ Քաջարանը դարձնելով ստրուկների եւ ճորտերի քաղաք:

Նայեք ձեր վարած կադրային քաղաքականությանը. հիմնական պաշտոններում նշանակել եք ոչ տեղացիների, եւ հրավիրված կադրերին մի քանի անգամ բարձր աշխատավարձ եք վճարում, քան տեղացի մասնագետներին:

Դուք տապալել եք մարզի հանրակրթական համակարգը, պրոֆեսիոնալներին հեռացրել եք զբաղեցրած պաշտոններից՝ փոխարենը նշանակելով դիլետանտների ու կասկածելի վարքագիծ ունեցողների:

Նույն կերպ եք վարվել Կապանի ինստիտուտի հետ:

Դուք երբեւէ շփվե՞լ եք մարզի բնակիչների հետ: Քանի՞ գյուղում եք եղել, գոնե գիտե՞ք մեր գյուղերի տեղը, մեկուկես տարում գյուղաբնակներից քանիսի՞ հոգսն եք թեթեւացրել:

Դուք հաշվե՞լ եք, թե քանի մարդու դեմ եք «գործ տվել», քանի հոգու դեմ եք քրեական գործեր շինելու պատվեր տվել: Ո՞նց եք այդքան ստորություններից հետո ձեզ մարդ զգում:

Ձեր երթուղին ընդամենը հետեւյալն է՝ Երեւանից ուղղաթիռով թռչում եք Կապանի օդակայան, այնտեղից՝ մարզպետարան, մարզպետարանից՝ պրոֆիլակտորիա եւ հակառակը:

Իսկ աշխատանքի գալու դեպքում էլ շփվում եք բացառապես գործակալների, գործ տվողների եւ ոչ տեղացիների հետ:

Դուք միլիարդներ եք թալանել Սյունիքի մարզից ու դրանից գրոշներ եք շպրտում ուսանողներին՝ իբրեւ կրթաթոշակ կամ ուսման վարձ՝ փորձելով թոզ փչել մարդկանց աչքերին, փորձելով վաստակել նրանց կողմից ձեր հանցավոր գործունեության հանդուրժումը:

Հարգելի ուսանողներ, ո՞վ է սա, ում դուք լսում եք: Իր բոլոր խոսքերը դատարկաբանություն են եւ ստախոսություն: Մերժեք այս մարդուն եւ դուրս հրավիրեք նրան դահլիճից:

Կորեք այստեղից, հեռացեք Սյունիքից...»:

-Դուք ձեր չափն անցնում եք, - անսպասելի իրավիճակում հայտնված եւ շփոթված մարզպետը փորձեց ինքնապաշտպանվել:

Իսկ Լեռնիկ Պետրոսյանը հակադարձեց՝ **«Նույնիսկ քիչ եմ ասում, հեռացեք...»:**

Բանավեճին փորձեց միջամտել մարզպետի թիկնապահներից մեկը (չորս թիկնապահից երկուսը դահլիճի մուտքն էին հսկում, երկուսը՝ ներսում էին), բայց Լեռնիկ Պետրոսյանը նրան սաստեց ու տեղը դրեց:

Այդ ամենից հետո Լեռնիկ Պետրոսյանը դուրս եկավ դահլիճից: Քիչ անց դահլիճից դուրս եկավ նաեւ մարզպետը՝ թիկնապահների հսկողությամբ: Ուսանողներն էլ, այդ ամենից հետո, հայտարարեցին դասադուլ եւ ոգեւորված դուրս եկան փողոց...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Պահանջեցին Կապանի համայնքապետի հրաժարականը

Ապրիլի 26-ին Կապանում օրվա ընթացքում շարունակվել են անհնազանդության երթերը, որոնց հիմնականում մասնակցում էին քաղաքի տարբեր դպրոցների աշակերտներ եւ ուսումնական հաստատությունների սովորողներ: Ժամը 18-ի սահմաններում երթի մասնակիցներն Արշավիր Խալափյանի առաջնորդությամբ Բաղաբերդ թաղամասի վերջնամասից քայլերթով շարժվեցին դեպի քաղաքի կենտրոն: Կապանի համայնքապետարանի պուրակում նրանց միացան այդտեղ հավաքված քաղաքացիները: Ըստ ամենայնի՝ հանրահավաք չկայացավ, ելույթներ չհնչեցին, միայն ցույցի մասնակիցները պահանջեցին Կապան համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանի հրաժարականը: Այնուհետեւ երթի մասնակիցները «Նիկոլ, վարչապետ», «Ոչ հանրապետականին» եւ այլ վանկարկումներով շարունակեցին իրենց երթը քաղաքի փողոցներով:

Սեփ.լրատվ.

Շուն Ֆրանգյուլի մերօրյա հաջորդները թող հիշեն, որ իրենց գերեզմանին եւս թքելու են գալիք սերունդները

Ապրիլի 29-ին Լեռնիկ Պետրոսյանը «Սյունյաց երկրին» տված հարցազրույցում նշել է, թե քաջարանցիները կոմբինատում ճորտի կարգավիճակում են:

Համաձայն չեմ հարգելի պրոֆեսորի կարծիքին. քաջարանցիներն աշխատասեր, ազնիվ, անկեղծ, իրենց մաքուր վաստակով ապրող մարդիկ են: Եվ ոչ թե նրանք են ճորտի կարգավիճակում, այլ հայտնի կլանին ծառայող մի քանի քաջարանցի, ովքեր մեծ փորձ ունեն սալյարկա գողանալու գործում, ովքեր կլանի հենարանն են Քաջարանում, որոնց էլ կլանը պաշտոններ տվեց՝ յուրաքանչյուրին ամսական մի քանի մլն դրամ «աշխատավարձով», որպեսզի Քաջարանում հաստատուն պահեն վախի մթնոլորտը:

Շարքային քաջարանցիները հազիվ են հոգում իրենց ընտանիքի հոգսերը, չկա մեկը, որ պարտքեր եւ վարկեր չունենա:

Հաստատված կարգից շեղվողներին, անշուշտ, լուրջ անախորժություններ են սպասվում:

Բայց, հուրախություն բոլորի, վախի մթնոլորտը լեռնագործների քաղաքում աստիճանաբար ցրվում է:

Քաջարանցիները համաձայն են համազգային շարժմանը՝ ակնկալելով փոփոխություններ նաեւ իրենց համայնքում:

Քաջարանում փոփոխվող մթնոլորտի մասին են խոսում ապրիլի 25-ին քաղաքում տեղի ունեցած ցույցն ու հանրահավաքը:

Ճիշտ է, ընդամենը հարյուր մարդ էր մասնակցում ցույցին եւ հանրահավաքին, բայց դա կարելի է աննախադեպ համարել Քաջարանի մասշտաբով:

Ցուցարարները նախ գնացել են դպրոցներ, արհեստագործական ուսումնարան եւ աշակերտներին, ուսանողներին դասադուլի, նաեւ իրենց միանալու կոչեր հնչեցրել:

Հանրահավաքը տեղի է ունեցել համայնքապետարանի դիմացի պուրակում՝ շատրվանների մոտ:

Նախկին դաշնակ Լեռնիկն իր գեղեցիկ, համոզիչ խոսքով բացել է հանրահավաքը, ներկայացրել հանրապետությունում ստեղծված վիճակը, որից հետո ինքս եմ ելույթ ունեցել:

Կոչ եմ արել քաջարանցիներին՝ չվախենալ ոչ մեկից, քանզի սա մեր քաղաքն ու մեր հողն է, մենք ենք տերն ու մշակն այս քաղաքի:

Կոչ եմ արել նաեւ հայտնի մարդկանց՝ թող ոչ ոք չփորձի մեզ դնել անգլուխների, անտառաճանաչների տեղ, բոլորս էլ տեսնում եւ հասկանում ենք, թե ինչ է կատարվում Քաջարանում:

Ասել եմ նաեւ՝ «Ես խոսում եմ քաջարանցի հանքագործների անունից եւ խորհուրդ եմ տալիս հիշել շուն Ֆրանգյուլի պատմությունը: Մենք չպետք է թույլ տանք, որ Քաջարանում շուն Ֆրանգյուլը հաջորդներ ունենա: Դա հատկապես վերաբերվում է կլանի սպասավորներին: Հիշեք, նմանների գերեզմանին երբեւէ թքելու են մեր հաջորդ սերունդները, ինչպես դարեր շարունակ մեր նախնիներն են թքել Ֆրանգյուլի գերեզմանին»:

Շատրվանների դիմացի մայթում կանգնած եւ հանրահավաքի ընթացքին հետեւում էին համայնքապետ Մանվելը, հայտնի «մուտիլովչիկ» Դավիթ Գեւորգյանը, ով կոմբինատի արհմիության նախագահն է:

Մայթից մեզ հետեւում էին կոմբինատից սալյարկա գողանալու մեջ մեծ վաստակ ունեցող այրերը:

Ես կոչ արեցի Մանվելին՝ միանալ մեզ, բայց չմիացավ:

Քիչ հետո ինչ-որ մեքենաների շարասյուն մոտեցավ մեր հավաքատեղիին՝ ազդանշաններով՝ փորձելով խանգարել մեզ:

Ես նրանց արձագանքեցի՝ զռացեք, դուք միայն զռզռալ գիտեք եւ սալյարկա գողանալ:

...Նույն օրը երեկոյան մի տղամարդ եկավ մեր տուն՝ ասելով. «Եկել եմ բոլոր քաջարանցիների անունից շնորհակալություն հայտնելու քեզ: Հասկանալի պատճառով մենք չկարողացանք միանալ հանրահավաքին, բայց բոլորս սրտով ու մտքով այնտեղ էինք»:

Լիլիկ Մարգարյան
Քաջարան քաղաքի բնակիչ

Խմբագրության կողմից

Լիլիկ Մարգարյանը Կապանի տարածաշրջանում ճանաչված գերդաստանի դուստր է, ով միշտ էլ քաջարանցիների արժանապատվության համար պայքարի առաջնագծում է եղել: Նա Արցախյան ազատամարտի նահատակ Արթուր Մարգարյանի քույրն է:

Զարուհի Տոնապետյան, հեռացիր Քաջարանից, եւ ես կմոռանամ քո վատ արարքները

Զարուհի Տոնապետյան, ես այն աղջիկն եմ, ում դու հնարավորություն չտվեցիր, որպեսզի գիտելիքներիս ու կարողություններիս չափով նպաստեմ իմ քաղաքի զարգացմանը:

Եվ նման շատ օրինակներ կան, երբ դու խոչընդոտել ու խոչընդոտում ես իմ քաղաքի զարգացմանը:

Իսկ հիմա, որպես Արցախյան հերոսամարտում զոհված ազատամարտիկ Ռոբերտի դուստր, որպես սյունեցի, որպես քաջարանցի հպարտ ու «դուխով» պահանջում եմ քո հրաժարականը. շտապ, անհապաղ:

Գուցե դու կիրթ ու գրագետ աղջիկ ես (չեմ կարող դա հաստատել), գուցե դու, ինչպես ասում են, գողական կլանի առաջին ու կին հրահրիչն ես (դա նույնպես չեմ կարող հաստատել), բայց դու (ամեն դեպքում) կին ես, հայ կին... Եթե գոնե մի քիչ արժանապատվություն ունես, ապա հասկացիր ու գիտակցիր, որ բազմաթիվ քաջարանցիներ, սյունեցիներ քեզանից հիասթափված են լիովին:

Իմ շատ հարազատների ու համաքաղաքացիների անունից կոչ եմ անում՝ անհապաղ հեռանալ քաղաքիցս:

Ես այդ քայլդ կողջունեմ ու բարձր կգնահատեմ, նույնիսկ կմոռանամ քո վատ եւ մերժելի արարքները:

Արուս Պապյան

Զարուհի Տոնապետյա՞նն է իր թիկնապահին ուղարկել Կապան՝ ահաբեկելու ցուցարարներին

Ըստ Քաջարանից ստացվող տեղեկությունների՝ քաջարանցիները դատապարտում են պղնձամոլիբդենային կոմբինատից վարձկաններ հավաքագրելու եւ ապրիլի 21-ին ընդդեմ կապանցի ցուցարարների ուղարկելու ամոթալի իրողությունը:

Մեզ տեղեկացնում են նաեւ, որ վարձկանների հավաքագրման գործն ավազակախմբի լիդերներից մեկը՝ Զարուհի Տոնապետյանը, հանձնարարել է իր թիկնազորի պետին: Վերջինս էլ հավաքագրել է «բիլակով» հանրապետականների եւ խաբել, թե գնում են Կապան՝ ժողովի: Ճանապարհին Զարուհու թիկնապահը վարձկաններին ասել է, որ ոչ թե ժողովի են գնում, այլ պետք է ցրեն Կապանում տեղի ունեցող ցույցը:

Հրահանգել է նաեւ, որ ցուցարարների վրա հարձակումը պետք է սկսել այն պահին, երբ ինքը գլխով կամ աչքով նշան կանի:

Այդպես էլ եղել է...

Ի դեպ, մինչեւ հիմա Կապանի համայնքապետ Աշոտ Հայրապետյանը չի դատապարտել կապանցի ցուցարարներին քաջարանցի վարձկանների կողմից ահաբեկելու փաստը:

Այդ առիթով դեռեւս խոսք չի ասել Սյունիքի մարզի տխրահռչակ ոստիկանապետ Արշավիրը:

Հույս ունենք, որ ոստիկանության Սյունիքի վարչությունը հարցաքննության կհրավիրի Զարուհի Տոնապետյանին եւ նրա թիկնապահին:

«Սյունյաց երկիր»

Վախճանվել է ճանաչված ռենտգենաբան Միքայել Կարապետյանը

Երկրային կյանքին հրաժեշտ է տվել մեծ համբավ ունեցող ռենտգենաբան եւ Գորիսում ու նրա սահմաններից դուրս հարգված անձնավորություն Միքայել Կարապետյանը:

Ծնվել է 1934-ին Խնձորեսկում: 1954-ին ընդունվել է Երեւանի բժշկական ինստիտուտի մանկաբուժության ֆակուլտետը: Բուհն ավարտելուց հետո 1960-ին երիտասարդ մանկաբույժը վերադառնում է հայրենի քաղաք, բայց մասնագիտությամբ տեղ չլինելու պատճառով որպես թերապեւտ-բժիշկ երկու տարի աշխատել է Խնձորեսկում: 1960-ին ամուսնացել է Արզումանյան Մայուրայի հետ, հետագայում անվանի մանկավարժ, ունեցել են դուստր եւ որդի:

Խնձորեսկում երկու տարի աշխատելուց հետո Մ. Կարապետյանը նորից Գորիսում էր: Նորից մանկաբույժի տեղ չկար, միայն ռենտգենաբանի տեղն էր թափուր, եւ յոթնամսյա վերապատրաստման դասընթացներ անցնելուց հետո դարձել է ճանաչված ռենտգենաբան: Նրա ախտորոշումներից ոչ մեկը մայրաքաղաքի մասնագիտացված բուժհիմնարկներում չի ժխտվել կամ վերաորակավորվել:

1983 թվականին հանրապետության առողջապահության նախարարության ռենտգենաբանության խորհուրդը նրան շնորհել է բարձր կարգի ռենտգենաբան բժշկի կոչում, որը նրա արհեստավարժ աշխատանքի յուրահատուկ գնահատականն էր: Միքայել Կարապետյան բժշկի դերակատարումը կարեւորվեց հատկապես Արցախյան պատերազմի տարիներին: Մարտական գործողությունների ընթացքում Գորիսի բժշկական կենտրոնը փաստորեն զինվորական հոսպիտալի էր վերածվել: Տասնյակ վիրավորներ են անցել բժիշկ Կարապետյանի ռենտգեն կաբինետով: Նրա կատարածը դուրս էր աշխատանքային պարտականությունների շրջանակից, որն աննկատ չէր կարող մնալ:

1999թ. մայիսի 25-ին Սպարապետ Վազգեն Սարգսյանը նրան պարգեւատրեց 1992-1994թթ.«Մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով, իսկ 2010թ. հունվարին Արցախի նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով բժիշկն արժանացավ «Մարտական ծառայության համար» մեդալի:

Պարգեւը՝ պարգեւ, բայց միայն եզակիներին է հաջողվում հասարակության կողմից համընդհանուր ճանաչման եւ նման հարգանքի արժանանալ, ու այդ եզակիներից մեկը բժիշկ Կարապետյանն էր, ում, որպես հարգանքի նշան, ժողովուրդը կոչել է ռենտգենոլոգ, ինչը ժողովրդական վարպետ պատվանվան հոմանիշ է:

Լույս իջնի գերեզմանիդ, մեծարգո բժիշկ:

«Սյունյաց Երկիր»

Ինչո՞ւ էր Վահե Հակոբյանն ուզում ձերբակալել Մեղրու համայնքապետ Մխիթարին

Հայաստանի ներքաղաքական բուռն իրադարձությունների սյունիքյան արձագանքները, ինչպես ենթադրվում էր, տարբերվում էին եւ շարունակում են տարբերվել մյուս մարզերից:

Սյունիքյան իրադարձությունների հիմնական թիրախը Վահե Հակոբյանն ու համայնքների ղեկավարներն էին եւ են, ինչպես եւ Քաջարանի կոմբինատում բույն դրած ավազակախումբը:

Դա երեւում է նաեւ «Սյունյաց երկրի» խմբագրություն ուղարկվող դիմումներից, հոդվածներից, ստացվող հեռախոսազանգերից:

Մարզպետարանից ստացվող հերթական տեղեկատվությունն այն մասին է, որ Վահե Հակոբյանը Մեղրիում նույնպես ստեղծել էր «գործ տվողների»շարասյուն:

Մասնավորապես՝ մարզպետի պատվերով էին Մեղրի համայնքի ղեկավար Մխիթարը եւ Մեղրու հիվանդանոցի տնօրեն Լուսինեն (վերջինս ոչ անհայտ Ծաղիկի քույրն է) բողոքներ գրել բժշկասոցիալական փորձաքննության մարզային հանձնաժողովի նախագահ Անուշ Օրբելյանի գործունեության վերաբերյալ:

Պատվերով գրված նամակները՝ զրպարտող տեղեկություններով, մարզպետն ուղարկել էր ՀՀ աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարություն՝ մարզային հանձնաժողովում արտահերթ ստուգումներ անցկացնելու նպատակով:

Իհարկե, ոչ ոք չի ասում եւ չի կարող ասել, թե որեւէ համայնքի ղեկավար, որեւէ հիվանդանոցի տնօրեն իրավունք չունեն իրենց մտահոգող հարցերը բարձրացնել ըստ պատկանելության: Բայց երբ բողոքը գրվում է ինչ-որ մեկի, այս դեպքում՝

մարզպետի հրահրմամբ, ապա դա, չուզենալու դեպքում անգամ, չենք կարող անբարոյականություն չանվանել:

Գրեթե նմանատիպ մի երեւույթ էլ նկատվեց Ագարակի դպրոցի տնօրեն Էռնա Բարխուդարյանի դերակատարմամբ:

Հանրակրթական դպրոցի տնօրենը, կորցնելով ամոթը, սուտ մատնություն պարունակող մի հաղորդում ուղարկեց ոստիկանություն՝ իբր «Սյունյաց երկրին» առնչվող:

Դարձյալ մարզպետարանից ստացվող տեղեկատվության համաձայն՝ էռնային սուտ մատնության է մղել Մխիթար համայնքապետը, ում էլ հրահանգել էր Վահե Հակոբյանը:

Եվ, այդուհանդերձ, մարզպետի հիվանդագին մոլուցքը՝ ամենուրեք ունենալ «գործ տվողների» շարասյուն, այլեւս որեւէ մեկին չի զարմացնում:

Մեզ չեն զարմացնում էռնայի եւ սպիտակ խալաթավոր Լուսինեի արգահատելի պահվածքն ու գործիք դառնալու կիրքը եւս:

Մխիթարի պահվածքն էլ այլեւս չի զարմացնում. տարիներ առաջ էին մեզ զգուշացնում, որ ընդունակ է նման քայլերի:

Ափսոսանքի տեղիք է տալիս բուն երեւույթը, որ մի քանի հոգի, մարզպետի հրահրմամբ, Մեղրու սրբազան հողում կարողացել են «գործ տվողների» բույն շինել: Այնպես որ՝ չենք էլ հարցնում՝ այդ ինպե՞ս եղավ, որ համայնքապետի անունը կապվեց Մեղրիից պատվերով գրվող բողոքների հետ:

Վերջին օրերին մեր տրամադրության տակ են հայտնվել տեղեկություններ, թե ինչպես է Վահե մարզպետը Մխիթարին ներքաշել անմաքուր այդ խաղերի մեջ, որը, անշուշտ, խոսակցության առանձին նյութ է: Մի բան կարող ենք առայժմ հստակ ասել՝ մարզպետի պաշտոնում նշանակվելուց մի քանի օր առաջ Վահե Հակոբյանը տողերիս հեղինակին հայտարարել է. «Մարզպետ նշանակվելու դեպքում առաջին գործս լինելու է Մխոյի ձերբակալումը, իսկ թե ինչու՝ հետո կիմանաք»: Մենք մարզպետին հանդուրժողականության կոչ արեցինք, բայց նա մնաց հաստատուն իր մտադրության մեջ: Եվ ստիպված եղանք զգուշացնել Մխիթարին, ով էլ արձագանքեց ոչ պակաս վճռականությամբ. «Դեռ պարզ չէ, թե ով ում կփակի, իսկ ես դրա համար հիմքեր ունեմ»:

Թե ինչու էին միմյանց սպառնում Վահեն ու Մխիթարը, նույնպես խոսակցության առանձին նյութ է:

Թե ինչու եւ ինչպես խաղաղվեցին այդ տղերքն ու սկսեցին իրար լրացնել չար գործերում, մնում է ենթադրություններ անել:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մարզի դատախազ Վազգեն Հարությունյանն արձագանքել է syuniacyerkir.am կայքի հրապարակմանը

Ս.թ. ապրիլի 26-ին syuniacyerkir.am կայքում հրապարակվել է հոդված՝ «Մարզի դատախազ Վազգեն Հարությունյանին եւ ոչ բարով ոստիկանապետ Արշավիրին» վերտառությամբ:

Հոդվածում մասնավորապես նշվել է՝ **«Վերջին օրերին մարզում տեղի են ունեցել միջադեպեր, որոնց վերաբերյալ հանրությունը սպասում է Սյունիքի իրավապահ մարմինների գնահատականին կամ դիրքորոշմանը:**

Մասնավորապես՝ ապրիլի 21-ին Կապանի ցուցարարներին ահաբեկելու նպատակով, Քաջարանի կոմբինատից (Միեր Պոլոսկով տնօրենի հանձնարարությամբ) Կապան է գործուղվել վարձկանների խումբ:

Վարձկանները Կապանում իրենց դրսեւորել են ամենալկտի կերպով. այդ ամենի մասին տեսանյութեր կան սոցցանցերում:

Այնուհետեւ՝ ապրիլի 22-ին Կապանի Թումանյան փողոցում Վահե Հակոբյանը եւ իր թիկնապահը խուլիգանական արարք են թույլ տվել ցուցարարների հանդեպ. այդ մասին նույնպես տեսանյութեր կան սոցցանցերում:

Դու չե՞ք պատրաստվում գնահատական տալ Վահե Հակոբյանի եւ Միեր Պոլոսկովի արարքներին:

Եթե նրանց արարքներում հանցակազմ չեք գտնում, ապա գոնե հիմնավորեք Ձեր պաշտոնական դիրքորոշումը եւ տեղյակ պահեք հանրությանը»:

ՀՀ ոստիկանության Կապանի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Հ.Բաղդասարյանին հղած գրությամբ մարզի դատախազը մասնավորապես նշել է՝ **«Անհրաժեշտ է ստուգել հոդվածում նշված փաստերը՝ արդյունքների մասին հայտնելով թերթի խմբագրություն եւ մարզի դատախազություն»:**

Սեփ.լրատվ.

Նա Սյունիք էր ուղարկվել ավազակային սպույգ առաքելությամբ

էջ 1 հեղինակազրկել մարզի համայնքապետերին, զարկ տալ կոռուպցիային…

Վահե Հակոբյանի հանցավոր գործունեությունը լրատվական դաշտի «ոտնձգություններից» պաշտպանելու համար, ըստ խմբագրությունում առկա տեղեկությունների, Ազգային ժողովում, երկու Սաղաթելյանի ջանադրությամբ, ստեղծվել էր ինչ-որ «օթյակ»:

Ի դեպ, ժամանակն է, որ նրանք անկեղծանան եւ հանրությանը պարզաբանեն, թե ինչ դեր են ունեցել չարափառ մարզպետի հակապետական ու հակազգային գործունեությունը Սյունիքում հովանավորելու ուղղությամբ:

Եվ եթե հարգելի գերդաստանի երկու այրերն Ազգային ժողովից լոբբինգ են արել հօգուտ չարագործի, ապա դա շատ վատ է:

Սակայն լրատվական աջակցությամբ ու հովանավորությամբ չէ միայն, որ Երեւանն աջակցել է մարզպետին:

Պետական մարմիններին, իրավապահ համակարգին արգելված էր ընթացք տալ Սյունիքից ուղարկված դիմումներին, նամակներին, բողոքներին: Արգելված էր Վահե Հակոբյանին առնչվող հրապարակումներին անդրադառնալը:

Եվ այդ ամենը՝ Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերական հսկան՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը գործող սեփականատերերից խլելու եւ մեկ այլ սեփականատիրոջ ձեռքում կենտրոնացնելու նպատակով:

Հիշենք, թե ինչ համամասնությամբ եւ ում միջեւ էր 2004-ի դեկտեմբերին մասնավորեցվել Քաջարանի կոմբինատը (իհարկե, խոսակցության առանձին նյութ է այդ մասնավորեցման օրինավորությունն ու նպատակահարմարությունը):

Հատված ՀՀ կառավարության 2004թ. դեկտեբերի 9-ի որոշումից. «Զանգեզուրի ՊՄԿ ընկերության պետական սեփականություն հանդիսացող 957 334 հատ բաժնետոմսերը՝ յուրաքանչյուրը 20 հազար դրամ անվանական արժեքով, որոնք կազմում են Զանգեզուրի ՊՄԿ կանոնադրական կապիտալի 100 տոկոս բաժնետոմսերը, մասնավորեցնել «Քրոնիմետ ընկերությանը» (Գերմանիա), «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ին, «Արմենիան մոլիբդենիում փրոդաքշն» ՓԲԸ-ին, «Զանգեզուր մայնինգ» ՍՊԸ-ին՝ բաժնետոմսերի համապատասխանաբար 60, 15, 12.5 եւ 12.5 տոկոս հարաբերակցությամբ»:

Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ կոմբինատը զավթելու գործընթացը չեն կարողացել ավարտին հասցնել ցանկալի ժամանակահատվածում, ինչի համար էլ ձգձգվում էր ի վերուստ ձախողված մարզպետի պաշտոնանկությունը:

Հիմա էլ առաջ են եկել հարցեր, որոնց քննարկումից խուսափելն ուղղակի հնարավոր չէ.

ա)նշված ընկերությունները շարունակո՞ւմ են մնալ Զանգեզուրի ՊՄԿ-ի սեփականատեր,

բ)պահպանվե՞լ է բաժնետոմսերի նշված հարաբերակցությունը,

գ)ովքե՞ր են եղել նշված տնտեսվարող սուբյեկտների սեփականատերերը 2004-ի դեկտեմբերին եւ ներկայումս:

Այդ հարցերը եւ ընդհանրապես Զանգեզուրի ՊՄԿ-ի հետ տեղի ունեցած խարդախությունները 2014-ի օգոստոսից ի վեր, կարծում ենք, պետք է դառնան պետական հատուկ հանձնաժողովի ուսումնասիրության առարկա Հայաստանի նոր իշխանության համար:

Ու քանի դեռ այդ խարդախությունները չեն բացահայտվել եւ պետական գնահատականի չեն արժանացել, չենք կարող ասել, որ ազգային զարթոնքը (առնվազն Սյունիքի մասշտաբով) ծառայեցվում է ի նպաստ հայ ժողովրդի եւ հայոց պետության:

Ընդ որում՝ խոսքն ամենեւին էլ վենդետայի մասին չէ, խոսքը պետական ռելսերի վրա դրված մի խարդախության մասին է, որն ուղղակիորեն շոշափել է մեր պետական-ազգային շահը…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Շնորհակալություն

Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի բնակիչ Նատաշա Գուրգենի Համբարձումյանս, շնորհակալություն եմ ուզում հայտնում Սերգո Ռաֆիկի Գալստյանին («Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ի մատակարարման բաժնի պետ):

Իմ դուստրը՝ Ադամյան Գայանեն, երկար տարիներ (1-ին կարգի հաշմանդամ) գամված էր սայլակին: Ստանալով հաշմանդամության նպաստ, իսկ հետո զրկվելով դրանից, որպես մայր չէի կարողանում հոգալ նրա նվազագույն կարիքները:

Ս. Գալստյանն իր աջակցությունը հայտնեց մեր ընտանիքին՝ նպաստելով դստերս հասանելիք դրամական նպաստը վերականգնելուն:

Ես՝ երախտապարտ եմ նրան, մարդ, ով կանգնած է սոցիալապես անապահով խավի կողքին:

Հարգարժան Ս. Գալստյան, շնորհակալ եմ մարդասիրական եւ բարեխիղճ վերաբերմունքի համար: Ցանկանում եմ երկար տարիների բեղմնավոր աշխատանքային գործունեություն:

Հարգանքով՝ Ն. Համբարձումյան
ք. Ագարակ, Սայաթ-Նովա փ. 6/9

Պատվով անցած մարտական ուղի

էջ 1 զարդարեց «Փառքի երրորդ աստիճանի» շքանշանը: Գորնայա սարի մոտ՝ Սեւաստոպոլի ազատագրման մարտերում դրսեւորած խիզախության համար արժանացավ «Փառքի երկրորդ աստիճանի» շքանշանի: Թշնամու հակագրոհը հետ մղելիս վաշտի ավագ Մարտիրոսյանը փոխարինեց շարքից դուրս եկած դասակի հրամանատարին եւ ղեկավարեց ականածիգների գործողությունները:

Ինչպես գրում է հուշերում, իր համար հիշարժան էր Վիսլայի գետանցումը: Օդերի Ֆրանկֆուրտի ազատագրման մարտերին (1945թ. մարտ-ապրիլ) ակտիվորեն մասնակցելու համար երկրորդ անգամ արժանացավ «Կարմիր աստղի» շքանշանի: Ֆաշիստների որջ Բեռլինում ավարտեց իր մարտական ուղին, Բեռլինի գրավման համար եւս խրախուսվեց. նրա պարգեւներին ավելացավ «Արիության համար» մեդալը:

1945-ի աշնանը Երեւանի կենտրոնական հրապարակում մասնակցեց մեծ հաղթանակին նվիրված շքերթին, այնտեղ, որտեղից նույն հանդիսավորությամբ 1942-ի օգոստոսին մեկնել էր ռազմաճակատ:

Կրտսեր որդին՝ Լեռնիկը, սրբությամբ է պահպանում հոր շքանշաններն ու մեդալները, այդ պարգեւները հաստատող փաստաթղթերը: Նրա վկայությամբ՝ հայրը չէր սիրում խոսել իր սխրանքների մասին՝ ասելով, որ պարգեւներն իր մասին ամեն ինչ պատմում են… Եվ իրոք, հնարավոր չէ առանց հարգանքի զգացման շոշափել նրա ստացած շքանշաններն ու մարտական մեդալները, որոնցից յուրաքանչյուրի հետեւում մի սխրագործություն է, չխամրող մի հուշ…

Պետրոս Մարտիրոսյանի մարտական ուղու վրա լույս են սփռում կրտսեր դստեր՝ Ամալյա Մարտիրոսյանի մոտ գտնվող ալբոմում ամփոփված շնորհակալագրերը՝ ստացված Գերագույն գլխավոր հրամանատարից՝ տարբեր քաղաքների գրավմանը մասնակցելու համար, քաղվածքներ ռազմաճակատային թերթերից, վկայագրեր պարգեւների մասին, պատվոգրեր, լուսանկարներ: Ամալյան Կապանի երկրագիտական թանգարանի տնօրենն է եղել 1980-1999 թվականներին, երկրորդ աշխարհամարտի մասնակից հորն առնչվող յուրաքանչյուր փաստաթուղթ կամ գրություն նրա համար մասունք է: Նրա մոտ պահվող 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի ճակատային «Կարմիր զինվոր» թերթի 1943թ. նոյեմբերի 14-ի համարում «Ականածիգների գիշերային պարապմունքը» թղթակցությունից տեղեկանում ենք, որ մարտերի արանքում ընկած դադարների ժամանակ տակտիկական պարապմունքներ են անցկացվել, ընդ որում՝ նաեւ գիշերային ժամերին: **«Յուրաքանչյուր ականանետ գիշերը եւս պիտի գործի գերազանցորեն եւ դիպուկ հարվածներ հասցնի այնպես, ինչպես ցերեկը»,**- ջոկի հրամանատար Պետրոս Մարտիրոսյանի խոսքն է մեջբերել թղթակցության հեղինակը՝ հավելելով, որ Պետրոս Մարտիրոսյանի մարտիկները հմուտ գործողությամբ պարտության են մատնել հավանական հակառակորդին եւ գրավել նրանց դիրքերը: Ի դեպ, թերթի այդ համարում զետեղված է «Թամանցիների քայլերգը», որում այսպիսի տողեր կան. **«Առա՞ջ հանուն նախնիների, մենք թոռներն ենք քաջ Վարդանի»:**

Ալբոմում պահվող նյութերից ուշագրավ է գործող բանակից ուղարկված նամակը՝ հասցեագրված

Նկարում՝ Պետրոս Մարտիրոսյանը (ձախից՝ երկրորդը) պատերազմի վետերանների հետ Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի հուշարձանի մոտ

Պետրոս Մարտիրոսյանի ընտանիքին, ծնողներին, հարազատներին: Նրանում ասվում է, որ 14-րդ ամիսն է, ինչ Պետրոսը, որպես ականածիգ, գերմանացիների դեմ պայքարելիս հանդես է բերում անվախ մարտիկի, խիզախ ականածիգի հատկություն՝ մահ ու ավերածություն սփռելով գերմանական բլինդաժներում ու զորաշարքերում: Ականանետային վաշտի հրամանատար, կապիտան Գ. Ակոպովը գրում է, որ այդ նամակը որպես աչքալուսանք են ուղարկում Շիշկերտ՝ Պետրոս Մարտիրոսյանի ընտանիքին, ծնողներին եւ հարազատներին՝ ողջունելով, որ նման խիզախ զավակ են աճեցրել:

Իր բաժին պատերազմն արժանապատվորեն ավարտելուց հետո Պետրոս Մարտիրոսյանը շարունակեց աշխատանքն առեւտրի համակարգում՝ որպես հաշվապահ, ունեցավ երեք զավակ՝ Լարիսա, Լեռնիկ, Ամալյա: Երկու զավակ էլ ունեցել էր մինչեւ պատերազմը՝ Լաուրա, Լենդրուշ: Այսօր էլ, եթե կենդանի լիներ, կհպարտանար իր ժառանգներով՝ 15 թոռ, 22 ծոռ, մանավանդ իր անունը կրող Պետրոս թոռով, ով ավարտելով Երեւանի տնտեսագիտական համալսարանի մագիստրատուրան, ուսումը շարունակելով ասպիրանտուրայում, 26 տարեկանում թեկնածուական թեզ է պաշտպանել **«Ֆինանսական արդյունքի հաշվառման եւ վերլուծության կատարելագործման ուղիները ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում»** թեմայով եւ շարունակում է պապի մասնագիտությունը «Ապառաժ մայնինգ» ՍՊ ընկերությունում՝ որպես գլխավոր հաշվապահ:

Վաստակած հանգստի անցնելուց հետո էլ Պետրոս Մարտիրոսյանը ձգտում էր օգտակար լինել հասարակությանը, մանավանդ երիտասարդներին եւ դպրոցականներին ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Հանդիպումներ էր ունենում հանրակրթական դպրոցներում, բանակ ճանապարհելուն նվիրված հանրահավաքների ժամանակ զինակոչիկներին խորհուրդ տալիս արժանապատվորեն ծառայել հայրենիքին, նրանց ոգեւորում Մեծ հայրենականում մարտնչած հայ զինվորների սխրանքներով: Այդ մասին են պատմում «Սովետական մանկավարժ» ամսագրում, շրջանային «Պղնձի համար», այնուհետեւ «Ղափան» թերթերում տպագրված թղթակցությունները:

Երկրորդ աշխարհամարտի ակտիվ մասնակիցը, արտակարգ համեստ ու մեղմաբարո մարդը երկրային կյանքին հրաժեշտ է տվել 1990 թվականի փետրվարի 19-ին:

Այժմ կրկին մայիսի 9-ն է, որ իրավամբ նշվում է որպես մեծ հաղթանակի օր: Հաղթանակ, որին հասնելու համար ծանրակշիռ ավանդ ունի Թամանյան 89-րդ լեգենդար դիվիզիայի մարտիկ Պետրոս Մարտիրոսյանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Նշեցին պարի միջազգային օրը

Մեծն Կոմիտասը, ով հայ երգը մաքրեց օտար ազդեցություններից եւ վերադարձրեց իր ժողովրդին, պարը համարել է մարդկային կյանքի աչքի զարնող երեւույթներից մեկը, ըստ նրա՝ պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը՝ մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը: Պարն ազգություն չի ճանաչում, քանզի տարբեր ազգերի եւ տարբեր ոճերի պարերը սրտամոտ են բոլորին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի պարի միջազգային խորհրդի կողմից 1982-ից ապրիլի 29-ը նշվում է որպես պարի միջազգային օր՝ ի պատիվ ֆրանսիացի անվանի պարող եւ բալետմայստեր Ժան Ջոջ Նովերի: Պարարվեստի սիրահարների համար հիշարժան օրը համերգով նշեցին Կապանի մշակույթի կենտրոնի ստեղծագործական խմբերը: Բեմահարթակում «Նարա դանս» պարարվեստի ստուդիայի (ղեկավար՝ Նարինե Մովսիսյան) եւ «Պարի աստղեր» շոու ստուդիայի (ղեկավար՝ Էրիկ Քոչարյան) պարային խմբերն էին, ովքեր ցուցադրեցին տարբեր ոճերի պարեր: Հանդիսականին ողջունեցին մշակույթի կենտրոնի մանկական երգի ստուդիայի սաները (խմբավար՝ Մելինե Խաչատրյան): Ներկաները մեկ բոպե լռությամբ հարգեցին Ապրիլյան քառօրյա պատերազմի նահատակ Նորայր Գասպարյանի հիշատակը. ով մինչեւ բանակ զորակոչվելը Կապանի մշակույթի կենտրոնի «Պարի աստղեր» շոու ստուդիայում դրսեւորել էր իրեն որպես շնորհալի եւ հեռանկարային պարող:

Արժանին հատուցվեց մշակույթի կենտրոնի երբեմնի պարուսույցներին՝ Գառնիկ Խաչատրյան, Գուրգեն Հարությունյան, Բորիկ Հարությունյան: «Պարի աստղեր» շոու ստուդիայի եւ «Նարա դանս» պարարվեստի ստուդիայի կրտսեր եւ միջին խմբերի սաների համար անակնկալ էր պատրաստվել. նրանց հանձնվեցին հուշամեդալներ:

Կապանի մշակույթի կենտրոնի գեղարվեստական ղեկավար Աստղիկ Գրիգորյանը պարի միջազգային օրվա առթիվ շնորհակալագրեր հանձնեց աչքի ընկած պարողներին: Տոնական համերգը եզրափակվեց «Նարա դանս» պարարվեստի եւ «Պարի աստղեր» շոու ստուդիաների սաների միասնական պարով. բեմահարթակում մեր ավանդական «Քոչարին» էր:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

«Քաղաքամայր Երեւանը՝ երեկ, այսօր»

«Ազգային գրադարանային շաբաթվա» շրջանակում (անցկացվում է ապրիլի 16-ից 23-ը) Սյունիքի մարզային գրադարանի արվեստի բաժինը հանդես եկավ «Քաղաքամայր Երեւանը՝ երեկ եւ այսօր» միջոցառմամբ: Ըստ ամենայնի դա կլոր սեղան էր, քննարկում՝ նվիրված Երեւանի հիմնադրման 2800-ամյակին:

Մարզային գրադարանի արվեստի բաժնի վարիչ Ելենա Լալազարյանն անդրադարձավ Երեւանի պատմությանը՝ հին ժամանակներից մինչեւ մեր օրերը, իր խոսքում հղումներ արեց այն գրողներին, որոնց ստեղծագործություններում արտացոլված են Երեւանն ու երեւանցին:

Հիշատակվեց այն փաստը, որ 1920-ականների սկզբին Ալեքսանդր Մյասնիկյանի կոչով Երեւան եկան Ալեքսանդր Թամանյանը, Ալեքսանդր Սպենդիարովը, Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, այլ նշանավոր գործիչներ՝ վերածնելու իրենց ավերակված հայրենքը:

Այնուհետեւ միջոցառման մասնակից կապանաբնակ երեւանցիները եւ նրանք, ովքեր իրենց ուսանողությունը մայրաքաղաքում են անցկացրել, հիշեցին 1970-1980- ականների Երեւանը, երբ քաղաքն ուներ իր հստակ ճարտարապետական դեմքը, ուրույն կոլորիտը, Երեւանի փողոցներում շրջում էին ժողովրդին սիրելի եւ պաշտելի գրողներ ու արվեստագետներ, որոնց սիրով շրջապատում էր ժողովուրդը: Իսկ այժմ մի հրեշավոր ձեռք է բարձրացրել քաղաքի վրա, որի քարտեզի վրայից ավերվում-անհետանում են պատմամշակութային արժեք ունեցող շենքեր ու շինություններ, կանաչ պուրակներն ու գոտիները վերածվում են առեւտրի օբյեկտների: Վարդագույն քաղաքի համարում ունեցող մայրաքաղաքից միայն հուշ է մնացել:

Այնուամենայնիվ, քննարկման մասնակիցները մի եզրակացման հանգեցին. Երեւանը մի ձգողական ուժ ունի, որ միավորում է բոլոր հայերին:

Միջոցառման ժամանակ հնչեցին Երեւանին ձոնված երգեր, մեծադիր էկրանին ցուցադրվեցին լուսանկարներ՝ նաեւ նախախորհրդային Երեւանը պատկերող լուսանկարներ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կորել է

Գորիսի «Սյունիք» ինստիտուտի 2014թ. շրջանավարտ Սոֆիկ Էդիկի Ղուկասյանի ABN193554 դիպլոմը՝ տրված 03.06.2014թ., գրանցման համարը 333 (իրավագիտության բակալավրի աստիճան): Համարել անվավեր:

Կորել է

Վրույր Սիամանթոյի Անտոնյանի N001050 դիպլոմը՝ ստացված Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումից՝ 1999 թվականին: Համարել անվավեր:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1230, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 10.05.2018թ.: